

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՐԳԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ
ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵԶՄԻ 90-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԿՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՈՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՂՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՈՒՅՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՄՐԳՈՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԷՋՄԻԱԾՆԻ

**ՔՐԻՍՏՈՍԱՒՊՆԴ ՍԻՐՈՅ ՈՂԶՈՅՆ ԵՒ ՕՐԴՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ**

ՄԵԾԻ ՏԱՏԻ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ,
ՊԱՏՐԻԱՐքութեան ՀԱՅՈՑ
ՄՐԳՈՅ ԵՐՈՒՍԱԼԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԱՆՈՒՊՈՅՈՅ,
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,
ՔԵՐԱՅԱՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱՎԱԳԱՅ,

ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՃՐՈՅ ԵՒ ՊԱՇՏՈՆԵԻՅ ԵՒ ՍԻՐԵՑԵԱլ
ՀԱՄԱՅՆ ՀԱՎԱՏԱՑԵԱլ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Զի ինձ կեանք Քրիստոս Ե»:
(Փիլ. Ա 21)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Հայոց հաւափի վեմ Մայր Արոռ Սուրբ Էջմիածնից, որ ունենք պարզե մեզ երկնային ամենառափ շնորհով և օրինութեամբ, գոհութեան աղօքը ու փառաբանութիւն ենք մարդու ու Բարերար Ասպծուն այսօր, երբ 90-ամեայ յիշապակութեան առջեւ Հայոց Մեծ Եղեռնի, ի Հայասպան և ի Սփիլոս վերածնուած ժողովրդով համարձակաձայն կարող ենք կրկնել առաքեալի խօսքը. «Զի ինձ կեանք Քրիստոս Ե»:

Արդարեւ, Քեզ ապահնողը ամօթով չմնաց, Տէր, քանզի Դու ևս Յարուցեալ, և Քո Խօսքը՝ կենդանի ու կենդանարար ու յափիենական: Քեզ զիվենք իբրև ճշմարդութիւն, սէր ևս ողորմութիւն՝ Արարիչ ու Ամենախնամ, Ողորմած ու Փրկագործ: Քեզ զիվենք իբրև Ամորիչ

ու Առաջնորդող պահապան գօրութիւն: Մեր հայրերից այսպէս ուսանեցինք՝ փառատրելով Քեզ՝ Միածին Որդուոյ, Նօր և Սուրբ Հոգուն:

Քրիստոսի հետ յարութեան յոյսով, մահուան դէմ կեանքի յաղթութեան հաւաքով ասյրեց ու սկեղծեց մեր ժողովուրդը: Դարեիր մէջ բազում աւերներ ու հողմեր գրեսաւ, բայց Քրիստոսին յուսացեալ՝ հաւաքաց իր հոգու լոյսին, իր փրկութեանն ու վերածնողին: Միշտ հաւաքաց և իր պարմութեամբ ու իր թռղած ժառանգութեամբ վկայեց, որ յարուցեալ է Քրիստոս, և յարուցեալ է Քրիստոսին հաւաքացողը: Այս հաւաքով վերապրեցինք մեր պարմութեան ամենամեծ ողբերգութիւնը՝ մեր ժողովորդի ցեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում:

Առաջին համաշխարհային պատերազմի թոհ ու բոհի մէջ երիտրուրքական իշխանութիւնները ժամանակը պատեհ նկատեցին՝ աւարտին հասցնելու հայութեան բնաջնջման թուրքական պետքութեան որդեգրած քաղաքականութիւնը և ընդիշվ լուծելու հայկական հարցը: Արեւմբեան Հայաստանում՝ մեր Հայրենիքի մեծազդյան հապուածի վրայ և կայսրութեան հայաշաբ այլ բնակավայրերում իրականացուեցին անգէն հայ բնակչութեան կազմակերպուած ջարդեր: Մեր ժողովուրդը մահուան էր դադապարտուել միայն հայ և քրիստոնեայ լինելու համար, քանզի հայ մնալ ու քրիստոնեայ, նշանակում էր շարունակել լինել բնիկ ու փոհմիկ ժողովուրդը Հայաստան երկրի:

1915 թուականին աւերն էր թագաւորում, սարսափին ու մահը՝ հայոց բնակավայրերում: Փլում էր փունը հայի զիսին, այրում էր հողը իր մշակի ուրբի գրակ, ակօսը զերեզման էր դառնում, եկեղեցին՝ անբարբար յուշարձան: Եփրափի ափենքից մինչեւ Արաքսի հովիքներ, Սե ծովից մինչեւ Միջերկրական՝ ծորերը լցուեցին հայ մարդկանց դիակներով, զերեր՝ արինովք: Թալանուած ու փանջահար անգէն ժողովուրդը՝ կին, մանուկ ու ծեր քշուեցին անջուր անապաբ, և նրանց վերջին աղօթքի ունկնդիրը եղաւ տօրակէզ քամին: Անլուր ջարդերին զնաց մէկ ու կէս միլիոն հայութիւն, որը հողագործ էր, արհեստաւոր, կառուցող շինարար, վաճառական, բժիշկ ու զիսնական:

20-րդ լուսաւորեալ դարը եղեռնով սկսուեց մեր ժողովուրդի համար, որ նոր ժամանակներում յոյս ունէր զբնել անծի ապահովութիւն, մարդկային իրաւունքի պաշտպանութիւն և խաղաղ կեանք: Այս էր Հայկական հարցի բովանդակութիւնը: Սահմանադրական իրաւունք իսօսող երիտրուրքական իշխանութիւններն ամեն բան հաշուարկել էին՝ չկայ ժողովուրդ, չկայ Հայկական հարց, չկայ ժառանգորդ, չկայ պահանջափեր: Զարահենար ծրագրի հեղինակները վստահ էին, որ խսպա այսի բնաջնջուի հայութիւնը, երկրէ երկիր ցրուելով՝ անիշտաբակ ու անհետ պիտի վերանայ պարմութեան ասպարեզից: Ամեն բան հաշուարկել էին, բայց ոչ՝ Ասրուծոյ նախախնամութիւնը և Ասրծուն յուսացեալ ժողովուրդի ապրելու և արարելու կամքն ու գօրութիւնը:

Նոյն ջարդարարների արշաւանքներին դիմակայելով՝ ընդդէմ մահու խիզախումով հերոսացած՝ փրկուեց Արեւելեան Հայաստանի փոքրիկ հողակտորը, որի վրայ հասդարուեց հայոց նոր պետքականութիւնը: Մեր ազատ երկրի դրօշի ներքոյ Ծիծեռնակաբերդի բարձունքում Արաքսափահայեաց վեր է յառնել Մեծ եղեռնի յուշակոռողը, որքուն լուսեղէն զօրաց զներով հոգիներն են երկրի վրայ մեր հողը սրբացրած և երկնքում Ասրծուած փառաւանող մեր նահապակների, և որպես ձեռք-ձեռքի, սիրտ-սրբի միասին է ազգ հայոց: Յա-

և բարձագիտ այս բարձունքին մեր ցան ու արդար ցասումը գօրութիւն դարձաւ և ծնունդ առաջ Արցախեան յաղթանակող ողին:

Փառք թեզ, ժողովուրդ սիրելի, որ չերկնչեցիր մահուան քրքիջից: Խաչդ ուսած անցար Գողողոթայի ճանապարհներով և յարութիւն առար յալշանակած:

Փառք թեզ, ժողովուրդ սիրելի, որ վէրքը սրբիդ բնաւէր փունդ վերստիին կառուցեցիր Հայրենիքից հեռու և մօրիկ բազում երկրներուն և շարունակեցիր հայ մնալ ու քրիստոնեայ: Վրարող հանճարով շարունակեցիր հայ սկեղծել, կառուցել, զիւրութեան ու մշակոյթի բարձունքների հասնել և այսպէս ճանաչուած ապրել:

Երից փառք թեզ, ժողովուրդ սիրեցեալ, «Զի ինձ կեանք Քրիստոս Ե» հաւարով քայլեցիր դէպի քո կեանքի նոր այզարացը և յոսացիր իրաւոնիք ու արդարութեան դարի նոր առաօպն ու այս ճանապարհին մնացիր կանգուն ու արի:

Չենք մոռացել ու չենք կարող մոռանալ Հայոց ցեղասպանութիւնը, մեր պարմութեան այս մեծագոյն ողբերգութիւնը: Չենք մոռացել ու չենք կարող մոռանալ աւետակուած խնկարոյր երկիրը մեր, հայրենական սրբութիւններն ու բազմադարեայ յիշապակները: Մեզ հետք են մեր բիւրատը նահապակները՝ յայրին ու անյայր անուններով: Նրանց յիշապակի առջև միասին ենք միշտ: Մեզ հետք են ի պաշտպանութիւն մեր ժողովրդի բողոքի ազնի ճայն բարձրացրած մեծ մարդասէրները, որոնց շուրբերից մարդկութեան խիդճն էր խօսում Եղեռնի մահասիխու օրերին: Մեզ հետք են այն ժողովուրդները, ովքեր մարդասիրաբար ապաստավան դուեցին շարդերից փրկուած բեկորներին հայութեան:

Անցել են Ժամանակները, երբ մեր հայրերը չեն կարող ոգեկոչել յիշապակը մարդիրուսացած հայորդիների, երբ միայնակ էին ազգային ողբերգութեան ու Վշիք մէջ: Այսօր շար ազգեր ու պետութիւններ ճանաչում են մեր ժողովրդի հանդէպ զործուած ոճիրը՝ իրեն յանցանք մարդկութեան ու մարդկայնութեան դէմ: 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը պիտի ճանաչուի ու դարպապարպուի ողջ աշխարհի ու նաև Թուրքիայի կողմից՝ այն համոզումով, որ բռնութիւններն ու սպանութիւնները չեն կարող առաջնորդել մարդկութեան ճանապարհը: Խաղաղութիւնն ու ազար կեանքը, եղբայրութիւնը մարդկանց ու ազգերի միշտն, արդազն է բոլոր ժողովուրդների:

Մեծ եղեռնի 90-ամեայ փարեկիցի առիթով Մայր Աքռո Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրինութիւնն ու ողջոյնն ենք բերում աշխարհասիհու սիրեցեալ մեր ժողովուրդներին: Զեռք-ձեռքի ու սիրբ-սրբի միասին ենք յիշապակի առջև մեր անմեղ զոհերի, ովքեր իրենց աչքերը փակեցին մեր ժողովրդի վերածնութեան, մեր Հայրենիքի ազարութեան փեսիքով: Հաւագարիմ լինենք նրանց գետիքին: Որպես է ապրենք, փոխանցենք մեր զաւակներին Արարարի պատկերը նոյնական, Լուսաւորչի Կանթեղն անմար և հայրենի մեր հողն ու երկինքը միաւորող Սուրբ Էջմիածնի խորհուրդը յաւերժական: Որպես է ապրենք, համակ նուիրումով գեր կանցնենք մեր ազգային իղձերին ու ծգրումներին: Պաշտպանենք Արցախի ազարութեան իրաւոնքի, Հայոց ցեղասպանութեան ճանաչման մեր արդար դաւրը: Միասնական ուժերով կառուցենք նոր կեանքը Հայաստանի ու Արցախի և հայրենի հոլից առած ախինով գօրացեալ ու ծաղկուն պահպաննենք Հայ Սփիտօքը: Ապրենք «Զի ինձ կեանք Քրիստոս Ե» վստահութեամբ և հաւարով, որ Աստուած համախմբելու է մեզ Արարարի փեշերին: Տերը կամեցաւ ազգիս յարութիւնը, որպեսզի յարագենի Անեփարանի լոյ-

սով ու կեանքի սիրով աշխարհին բացուած հայի հոգին, և հայերէն աղօթքը շարունակի երկինք բարձրանալ՝ հայցելով աշխարհին խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն։ Հաւափանը ի Քրիստոս սիրով զօրացնալ առաքինազործ հոգու շնորհներին մեր կեանքում և հայոց միացեալ ու պայծառ գալիքին։

«Հաւափարուն կացէք, զրեղի կալջիք, պնդեալ զմէջս ձեր ճշնարուութեամբ, և զգեցեալ զգուահան արդարութեամ» (Եփիս. Զ 14):

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԺՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ԴԱՅՈՅ

Տուալ Կոնդակս ի 3-և Փետրուարի
յամի Տեառն 2005 եւ ի թուին Հայոց ՈՒՆՉԴ
ի տօնի Սրբոց Վարդանաց զօրավարացն՝
հազար երեսուն եւ վեց վկայիցն,
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 285